Պետրոս Դուրյան

Վիշտք հայուն

Փոխանակ քաղցր օրորներու, հայրենի՛ք,
Օրրանիս քով մայրիկս ըզքեզ միշտ ողբաց,
Համբույրին հետ շիթ մ՚ըզգացի արտասվաց,
Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք:
Ավերակաց ծաղկանցըդ սոսկ այցելու
Ջեփյուռն չ՚եկավ նժդեհ ճակատս շոյելու,
Փառաց դարեր ծընող՝ ընկող հայրենի՛ք,
Մամռոտ ավերք և դամբարան զորավիգ

Արարատյան հսկայից,
Ուր ծոր ճակտով վիրալից
Հեծե ոգին հայկական . . .
Բայց ի զո՜ւր. ողբ, վայ, կական
Եվ արտասուք ու հառաչ
Քեզ ըսփոփել չ՚են կարող,
Այլ վեհ ճակատ քրտնաշող
Ի՚արյունաբուխ կող ու լանջ:

Մոխիր հագած, արյուն ծըծած սև հողե՛ր,
Ուր կը տիրեն սոսկում, տըխուր հիշատակք,
Ալ ծոցեդ թոեր են հուսո քաղցր հրեշտակք
Եվ արյունոտ դափնի մ՚անգամ չ՚են թողեր . . . :
Սև շղթաներ եղան ինծի խանձարուր,

Մրթության մեջ սրրտիս վրրա հսկեց սուր,
Միթե Հա՞յ եմ՝ մինչդեռ չ՚ես իմս, Հայաստա՛ն.
Եվ հոյակապ, վեհ կոթողներդ պատվանդան

Օտարաց, գահդ՝ հիշատակ,
Եվ ճակատրդ կրես պրսակ
Արդ փրշահյուս, սև նոճի . . .
Ալ չրկա՛ վառ թագդ առջի,
Որուն ականց տեղ անգին՝
Դառնաթախիծ մրտածմանց
Քրտունքներ սառ՝ քար կտրած՝
Կնճռոտ ճակատդ պճնեցին:

Երբոր տեսավ արյունլրվա վարդին ծոց՝
Վարդատարփիկ բուլբուլն դողով թռչեցավ,
Սուգին փափկիկ թևքն արցունքով թրջեցավ՝
Սիրատրոփ լանջք կուսից տեսավ երբ սրախոց . . .
Լրռեցին քնար, հանբույր, գեղգեղ և մրմունջ,
Հրաժե՛շտ տիրեց… և սիրակաթ շուրթեր մունջ
Համբուրեցին սև հողեր, ժայռ և ալիք,
Բույլ բույլ, բյուր բյուր ոգիք թրռան տրտմալիք.

Մասյաց մուսայք դողահար՝
Թողուցին պսակ և քրնար.
Դաշտեր, ձորեր և սարեր,
Ալիք, ժայռեր և սառեր,
Հե՛գ հայրենիք Հայաստա՛ն,
Ըզքե՛զ, ըզքե՛զ ողբացին,
Որ ուրացողք քեզ բացին
Բյուր բյուր՝ սև սև գերեզման:

Հայն էր, որ թագրդ գրլորեց փայլարձակ,
Եվ ալևոր ճակտիդ բարդեց սև ամպեր,

Հետո վայեց, երբ գերեզման կըշտապեր,
Այլ շնչասպառ էր՝ չ՝ուներ ձեռքը կայծակ,
Որ այն ամպերն փոթորկաբեր փարատեր,
Եվ հայրենիքն շղթաներե ազատեր.
Նոճյաց խորքը մահվան շունչը սոսափեց,
Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրեն խուսափեց.

Թողուց ավեր և արյուն,
Թաղեց հոն փառք և ավյուն.
Արդ կը տեսնե բոթաբեր
Ներկայն՝ ճիգ մը չը թափեր,
Հայաստա՛ն, քեզ փրկելու,
Անզգա դարձած դարե դար՝
Չը հիշեր քեզ, չը փութար
Քեզ անձկանոք գրկելու:

1868